Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն

2018 թվականի մարտի 21-ից 23-ը քաղաք Բրատիսլավա գործուղման վերաբերյալ

- **ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ**

Ամալյա Եղոյան

- **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

Սլովակիայի Հանրապետություն՝ քաղաք Բրատիսլավա, 2018թ. մարտի 21-ից 23-ը:

- **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Համաշխարհային բանկ:

- **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Մասնակցություն Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային նորարարական համաժողովին:

- **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ**

2018թ. մարտի 22-ից 24-ը Սլովակիայի Հանրապետության Բրատիսլավա քաղաքում կայացել է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային նորարարական համաժողովը, որին մասնակցել է ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Ամալյա Եղոյանի գլխավորած պատվիրակությունը:

Հայաստանի պատվիրակության կազմում են եղել ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարի տեղակալ Էմիլ Տարասյանը, «Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամի տնօրեն Բագրատ Ենգիբարյանը, «Ի-Վի Քոնսալթինգ» ընկերության հանրային խորհրդատվության ղեկավար Սևակ Հովհաննիսյանը, ինչպես նաև ոլորտի այլ ներկայացուցիչներ: Համաժողովը կազմակերպել է Համաշխարհային բանկը՝ Սլովակիայի և Ավստրիայի կառավարությունների հետ համատեղ:

Այն նպատակ է ունեցել նպաստելու ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտում տարածաշրջանային համագործակցությանը, փորձի փոխանակման միջոցով զարգացնելու տեխնոլոգիական լուծումների ներդրումը արտադրության ու արդյունաբերության ոլորտներում:

Եռօրյա համաժողովի աշխատանքներին մասնակցել են Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների ինովացիոն տեխնոլոգիաների ոլորտի պետական և մասնավոր կազմակերպությունների, գիտահետազոտական և կրթական հաստատությունների, դոնոր և միջազգային կառույցների ներկայացուցիչներ:

Տարածաշրջանային համաժողովի նպատակն էր դյուրացնել Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև նորարարությունների և առաջադեմ տեխնոլոգիաների ներուժի վերաբերյալ համակարգված երկխոսությունը՝ նպաստելով տարածաշրջանային ինտեգրմանը, աշխատատեղերի ստեղծմանը և տնտեսական աճին:

Այն ուղղված է եղել նաև հանրային-մասնավոր ոլորտների շփման ակտիվացմանը, նորարարական ռազմավարությունների և բարեփոխումների խթանմանը ինչպես տարածաշրջանային, այնպես էլ երկրների մակարդակով:

Հանդիպման ընթացքում քննարկվել են մասնակից երկրների տնտեսական հնարավորությունները, ներկայացվել է վերոնշյալ ոլորտներում Հայաստանի առաջընթացը և հեռանկարները: Վերոնշյալ համաժողովը

կարևոր հարթակ է դարձել կողմերի գործարար շրջանակների շփումների աշխուժացման և գործարար կապերի խորացման համար:

«Արդյունաբերություն և զարգացող տնտեսություններ. արտադրության զարգացման միտումները և մարտահրավերները» թեմայով քննարկումների ընթացքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Ամալյա Եղոյանը ներկայացրել է ՀՀ կառավարության կողմից իրականացվող այն ծրագրերը, որոնք ուղղված են պետություն-մասնավոր հատված համագործակցության ամրապնդմանը, նորարար ու տեխնոլոգիական լուծումները արտադրության զարգացած ու առաջնային ոլորտներ ուղղորդելուն:

Ներկայացվել են նաև Հայաստանի կողմից իրականացվող տեխնոլոգիական կենտրոնների ծրագրերն ու ՏՏ ոլորտի սկսնակ ընկերություններին տրամադրվող հարկային արտոնությունների շնորհիվ աշխատատեղերի ստեղծման աճի դինամիկան:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Համաժողովի շրջանակներում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի տեղակալ Ամալյա Եղոյանը հանդիպում է ունեցել «Ինթել» կորպորացիայի բիզնես ղեկավար Իռեն Փեթրիքի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանում ընկերության մասնաճյուղ հիմնելու հնարավորությունները:

Ամալյա Եղոյանը նշել է, որ Հայաստանում կան նպաստավոր պայմաններ՝ հետազոտական լաբորատորիաներ ստեղծելու և ոլորտում համատեղ ձեռնարկատիրական սկզբունքներով բիզնես հիմնելու համար:

Նախարարի տեղակալը հանդիպել է նաև Համաշխարհային բանկի Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային փոխնախագահ

Սիրիլ Մյուլլերի և Հարավային Կովկասի, Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային տնօրեն Մերսի Թեմբոնի հետ:

Հանդիպման ընթացքում քննարկվել են Համաշխարհային բանկի հետ ՏՀՏ ոլորտում համագործակցության ընդլայնմանն առնչվող մի շարք հարցեր:

- **ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

Պայմանավորվածություն է ձեռք բերվել նախապատրաստել լեհական կողմի այցի Հայաստան և համագործակցության հաջորդական քայլերը մշակել Համաշխարհային բանկի հայաստանյան գրասենյակի ղեկավարի հետ:

- **ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Ամալյա Եղոյան

29.03.2018թ.